ՀՐԱՆՏ (ՄՆԱՑԱԿԱՆ) ՄԿՐՏՉԻ
ԹԱՎԱՔԱԼՅԱՆ

Ծնվել է 1892թ., Բաքվի նահանգի Մադրասա գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Այն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ և զբաղվել ուսուցչությամբ: 1917թ. ընդունվել է Կիևի առևտրի ինստիտուտը, այնուհետև ուսումը շարունակել տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընտրվել է Կիևի զինվորական կոմիտեի անդամ, 1918-19թթ. եղել է Հայկական գործերի կոմիսարիատի ներկայացուցիչը Ցարիցինում և Աստրախանում: Մասնակցել է քաղաքացիական կռիվներին:

1920թ. հունվարին Ռուսաստանի կոմկուսի Անդրկովկասյան երկրային կոմիտեի կողմից աշխատանքի է ուղարկվել Հայաստան: Բանտարկվել է Մայիսյան ապստամբությանը մասնակցելու համար: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ազատվել է բանտից:

1920-1921թթ. եղել է Երևան քաղաքի և գավառի հեղկոմի նախագահը:

1921թ. նշանակվել է կոմկուսի Երևանի գավառային կոմիտեի քարտուղար, իսկ 1921-1923թթ.՝ ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավառային կոմիտեի քարտուղար:

1923թ. սեպտեմբերին գործուղվել է ԱՄՆ՝ Հայաստանի օգնության կոմիտեի աշխատանքները կազմակերպելու նպատակով:

1924թ. օգոստոսին հեռացվել է կուսակցությունից և Արտակարգ հանձնաժողովի միջոցով մեկուսացվել: